

Մոսկուա երկ Բանաստայի արտաքին գործոց նախարար Պիլ Կրահանը վստահեցուց, որ Ռուսիոյ օժանդակութեամբ կառուցուելիք կորիպային կայաններուն մէջ Իրան պիտի չկարենայ կորիպային հրթիռներ շինել:

Ուաշինկթըն Ռուսիայէն պահանջած է վերատեսութեան ենթարկել Իրանի մէջ կորիպային կայան մը շինելու համաձայնագիրը՝ ըսելով, որ նախագահ Ճորձ Գուշի կողմէ «չարութեան առանցք»ի մը անդամ նկատուած Իրան կրնայ կայանը օգտագործել՝ կորիպային հրթիռներ շինելու համար:

Ռուսիոյ կորիպային ուժանիթի նախարար Ալեքսանտր Ռուսմանցեւ շեշտեց, որ Իրան առաջադրած է կորիպային կայանը օգտագործել «խաղաղ ծրագիրներու համար»:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԱՊՊՊԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկ երեկոյեան նախագահեց ապապետականացման Գերագոյն խորհուրդի նիստին, ուր քննարկուեցան ելեկտրականութեան եւ ջուրի ընկերութիւններու ապապետականացման առնչուած հարցեր:

Վարչապետ Հարիրի երկ ընդունեց առողջապահութեան նախարար Ալեքսան Ֆրենսիսէն, որուն հետ քննարկեց երկիրը յուլոյ ընդհանուր հարցեր եւ շրջանային վերջին վարգառումները:

Հարիրի այցելեց նաեւ երեսփոխան Ռամի Պարիսի, որ ներկայացուց Աքքար շրջանի կարիքները:

Ապապետականացման Գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Ղապի Եուսէֆ յայտնեց, որ ելեկտրականութեան եւ ջուրի ընկերութիւններու ապապետականացման ծրագիրով հետաքրքրուած են շուրջ 19 հաստատութիւններ՝ գերմանական, քրեական, իտալական, արաբական եւ այլն:

Եուսէֆ յայտնեց, որ պետութիւնը առաջին հանգրուանին ապապետականացման պիտի յատկացնէ միայն նշեալ երկու մարպետու 40 առ հարիւր եւ մինչեւ 2006 բաժնեկից պիտի մնայ ելեկտրականութեան եւ ջուրի մարպետու:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱԽԱԳԱՀ ՌՈՊԵՐԹ ՔՈՉԱՐԵԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԱԴՐՈՒԵՑԱՒ

Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիային մէջ կայացած հանդիսութեան մը ընթացքին երէկ առաջադրուեցան Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեանի թեկնածութիւնը 2003ին կայանալիք նախագահական ընտրութիւններուն: Քոչարեանի թեկնածութիւնը առաջադրեց 287 հոգիէ բաղկացած քաղաքացիական նախաձեռնութեան խումբը, որուն մաս կը կազմեն քաղաքական ուժերու, հասարակական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, մտաւորականներ, Հայաստանի քաղաքացիներ: Հանդիսութեան ներկայ էին նախագահ Ռոպերթ Քոչարեան, Հ. Յ. Դ. Բերրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանգ Մարգարեան, վարչապետ Անդրանիկ Մարգարեան, քաղաքագէտներ եւ Ազգային ժողովի պատգամաւորներ:



ARMENPRESS

Հանդիսութեան առաջին խօսք առնող եղաւ հայրենի արուեստագէտ Սոս Մարգարեան, որ վերլուծելով նախագահ Քոչարեանի հինգ տարուան գործունէութիւնը, նշեց, որ պէտք է բաղդատել նախագահին կատարածը այն ժառանգութեան հետ, զոր ստացած էր 1998ին՝ նախագահի պաշտօնը ստանձնելով, եւ այս պարագային կարելի չէ չնկատել այն յառաջընթացը, որ արձանագրուած է:

Ելոյթ ունեցաւ գործարար Հրանգ Վարդանեան, որ անդրադարձաւ անտեսական մարգէններու անցողի ժամանակաշրջանին արձանագրուած յաջողութիւններուն:

Ապա խօսք առաւ արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան, որ թուեց այն յաջողութիւնները, զորս ունեցած է Հայաստան վերջին տարիներուն: Ան անդրադարձաւ Հոկտեմբեր 27ի դէպքէն ետք երկ-

Շարք՝ էջ 10

ՊԱՐՏՔԵՐԸ ԱՊՀԻ ԱՆԳՎՄ ԵՐԿԻՐՆԵՐԸ ԿԱԽԵԱԼ ԿԸ ԳԱՐՉՆԵՆ ՌՈՒՍԻԱՅԷՆ

ԷՁ 6

«ԱՔՍԱՅԻ ՆԱՅԱՏԱԿՆԵՐՈՒ ՓՈՂԱՆԳՆԵՐ»ՈՒ ԺԵՆԻՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ ՍՊԱՆՆՈՒԵՑԱՒ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՒՇԵՐԸ ՆԵՐԽՈՒՇԵՑԻՆ ԿԱԶԱ



Իսրայէլացի զինուոր մը կը վիճարանի պաղեստինցիի մը հետ շեպրոնի մէջ

Ջինուորական ուղղաթիւներու ընկերակցութեամբ, իսրայէլեան բանակի հրասայները կազմակերպեցին, ուր բախուած ունեցան պաղեստինցի զինեալներու հետ եւ ձեռքարկելու տանտեսակ մը պաղեստինցիներ:

Կազմակերպութեամբ մաս կը կազմէ զինուորական լայնածիր արշաւի մը, որուն ձեռնարկած է իսրայէլ պաղեստինեան շրջաններուն դէմ, իրրեւ հակադարձութիւն

անցեալ շաբթուան անձնասպանական գործողութիւններուն:

Իսրայէլեան բանակի հրասայները Տէյր Պալահ քաղաքն ու համայնութիւնը գաղթականներ մտան արեւածագէն առաջ: Գաղթականներին մէջ, իսրայէլեան ուժերը ուժահարեցին քառաձայր կշիռը իսլամականի մը, յայտնեցին ականատեսներ: Բանակը հաստատեց բնակարանին ուժահարութեամբ՝ դիտել տալով, որ հոն բնակող

ծայրայեղականը կրակ կը բանար իսրայէլացի զինուորներու եւ հրէական բնակեցման վայրերու վրայ: Բանակին մէջ կ'ընթացէր ակնցուց, որ կազմակերպութիւնը շուտով աւարտած է, եւ թէ իսրայէլեան ուժերը հետագային չընթանան:

Այսօրոյդանանի մէջ, իսրայէլեան բանակը յայտնեց, որ 25 հոգի ձերբակալած է Տէյրէ գաղթականներին եւ Բեթլեհէ:

Շարք՝ էջ 9

ԱՅՍՕՐ ԲՈԼՈՐ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐԸ ԿԸ ՄՆԱՆ ՓԱԿ ՈՒՄՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԴԱՍԱԴՈՒԼԻՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Սեփական եւ պետական վարժարաններու ուսուցիչները, Լիբանանեան համալսարանի դասախօսները եւ պետական մարզի պաշտօնեաները այսօր կը կատարեն միջոցառումներ, որոնք կը զորոգան «բողոքելով իրենց իրաւունքները ոտնակոխող յօդուածներու դէմ, որոնք տեղ գտած են պետական պիտուակին մէջ»:

Ուսուցիչներու դասադուլին կուգահեռ նաեւ պիտի կատարուին ցոյցեր խորհրդարանին եւ վարչապետարանին նստավայրին դիմաց առաւօտեան ժամը 10:00էն 12:00:

Ուսուցիչներու սենտիքայի նախագահ ժորժ Սաստէ երէկ յայտնեց, որ սենտիքան կատարած կը մնայ դասադուլը կատարելու իր որոշումին:

Սաստէ ըսաւ, որ ուսուցիչներու պահանջներուն ծիրէն ներս ժողով մը պիտի կատարուի նաեւ դասադուլի կապակերպիչներուն եւ կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Ապտէլ Ռահիմ Մըրատի միջեւ:

ԿԻՊՐՈՍԻ ՏԱԳՆԱՊ ԹՈՒՐԻՔԻԱ ԵՒ ԹՈՒՐԿ ԿԻՊՐԱՑԻՆԵՐ ԿՈՒՇԱՑՆԵՆ ՄԱԿԻ ԾՐԱԳԻՐԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԻՐԵՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Յունաստան մրցակից Թուրքիան եւ Թուրք կիպրացի ղեկավարները այսօր առաջին անգամ ՄԱԿի ծրագիրը առաջ մղելու կոչուած քայլերուն ուղեւորին համար՝ կոչ ուղղելով, որ բանակցութիւնները մօտ առեւնէն սկսին:

Յունաստան եւ կիպրոսի կառավարութիւնը ընդունած են ՄԱԿի կողմէ առաջարկուած ծրագիրին շուրջ բանակցութեանը ձեռնարկել:

Սակայն ո՛չ Թուրքիա, ոչ ալ Թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենթէքալ, որ Նիւ Եորքի մէջ ապաքինութեան ընթացքի մէջ է՝ սրտի վերաբուժութեան են-

Շարք՝ էջ 9

ԱԿՆԱՐԿ՝ ՔԵՍԱՊԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՎՐԱՅ ԷՁ 7

ԷՐՏՈՂԱՆ ԻՐԱՐՈՒ ՀԵՏ ԿԸ ՇՓՈԹԷ ԹՐՔՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՍԼԱՄՈՒԹԻՒՆԸ

Թուրքիոյ իշխող նոր կուսակցութեան ղեկավարը երէկ յայտնած է, որ Երտոպական Միութիւնը իսլամներու մօտ կասկածներ պիտի արթնցնէ, թէ «քրիստոնէայակումը մըն է», եթէ Թուրքիոյ անդամակցութեան վերաբերեալ բանակցութեանց սկսման թուական մը չճշդէ:

Արդարութեան եւ Բարգաւաճման Կուսակցութեան ղեկավար Թայյիփ Էրտողան Հելսինքիի մէջ մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտնած է, թէ Թուրքիոյ թուական մը տարբերակաւ ազդեցութիւն» պիտի ունենայ իսլամական աշխարհին կողմէ երտոպական պլոքը տեսնելու ձեռքը վրայ:

Ըստ Էրտողանի, շատ կարեւոր է փաս-

տել, թէ իսլամութեան մշակոյթը եւ ժողովրդավարութիւնը «կրնան գոյակցիլ եւ մերդաշնակ վիճակի մէջ գոյանալ»:

Դանիա, որ ներկայիս Ե. Միութեան նախագահն է, յայտնած է, թէ պլոքը տարակարծիք է Թուրքիոյ անդամակցութեան վերաբերեալ բանակցութեանց սկսման թուական մը տալու շուրջ:

Էրտողան Ֆինլանտա այցելած է՝ երտոպական մայրաքաղաքներ շրջապատուի մը ժիրէն ներս, Թուրքիոյ Ե. Միութեան անդամակցութեան գորակցութիւն ապահովելու նպատակով: Ան կը յուսայ, որ Դեկտեմբերի Քոփենհակընի Ե. Միութեան վեհաժողովին թուական մը պիտի ապահովուի:

Էրտողան յայտնած է, որ անցնող 18 ամիսներու բարեկարգումները եւ նոր կառավարութեան կողմէ ծրագրուած բարեկարգումները ասիկա կ'արդարացնեն:

Ֆինլանտա, իբրեւ 1999ին Ե. Միութեան նախագահ՝ Թուրքիան անդամակցութեան թեկնածու հրատարակեց: Վարչապետ Փաւաւ Լիփսինըն յայտնած է, թէ լաւ տպարտուած է Հելսինքիի մէջ Էրտողանի հետ իր տեսակցութիւնները:

«Թուրքիա իսկապէս Քոփենհակընի չափանիշներուն հասնելու ընթացքին մէջ կը գտնուի, եւ Քոփենհակընի մէջ պիտի տանք որակաւ նշան մը եւ պատգամ մը, թէ

Շարք՝ էջ 10

ԱԿՆԱՐԿ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԳԱՂՈ

Վերջին օրերուն Հայաստանի լրատուամիջոցները լուսարձակները կեդրոնացուցին Թուրքմենիստանէն հարիւր հայրենակիցներու հայրենադարձութեան երեւոյթին վրայ: Պարպուեցաւ, որ անպաշտօն տուեալներու հիման վրայ, 40 հազար հայեր այսօր կ'ապրին Թուրքմենիստանի տարածքին, որոնցմէ նկատուելի թիւ մը՝ առանց կեցութեան եւ աշխատանքի արտօնագիրներու:

Յատուկ վերլուծումի չի կարօտիր Թուրքմենիստանի համայնքի թիւին գոյառումի փաստը: Տնտեսական ճգնաժամը, նիւթական անձուկ վիճակը մղած է հայրենաբնակ հայը, որ իր ապրուստի միջոցները փնտռէ օտար երկրներու տակ, որոնք շարքին Թուրքմենիստանի: Եւ ասիկա՝ ի գին ապօրինի թշուառ կեցութեան, յաջորդ սերունդը հայ դպրոցէն արկելու եւ ընդհանրապէս ապագային առումով անհեռանկար գոյութիւն մը քաշքշելու:

Հայաստանի Հանրապետութեան նախորդ վարչակարգի թալանային քաղաքականութեան հետեւանքն է յատկապէս «ներքին Սփիւռք»ի այսօրուան պայտառուց համարանքին փաստացի իրողութիւնը:

Թուրքմենիստանի մէջ Հայաստանի դեսպան Արամ Գրիգորեանի իսկ հաստատումով, գաղթականական հարցերու միջապային կազմակերպութեան եւ Ֆինլանտայի կառավարութեան օժանդակութիւններով, ինչպէս նաեւ տեղւոյն դեսպանատան կազմակերպական աշխատանքներուն շնորհիւ կարելի եղած է Թուրքմենիստանի մէջ ապօրինի կեցութիւն հաստատած հայերու հայրենիք վերադարձը: Ըստ դեսպանին, մեծ է թիւը անոնց, որոնք կը շարունակեն անտեսել տեղւոյն իշխանութիւններու վտարման սպառնալիքները եւ կը յամառին մնալ իրենց նոր «ապաստարան»ը:

Այս իրականութիւնները մտածել կուտան, թէ ի՞նչն է ի վերջոյ շարժառիթը՝ անտեսելու վտարուելու վտանգը, իսլամական կուսակցութեան վստահաբար՝ տնտեսական տագնապը, նիւթական անձուկութիւնը, ընկերային թշուառութիւնը:

Բայց հարցը բնականաբար դուրս կու գայ տնտեսական - նիւթական - ընկերային պարունակէն եւ կը պզտու համապային տարակ, երբ նկատուին ունեանք գաղթած եւ նման իրավիճակներու մէջ ապրող այսօրուան իսլամ յաջորդ սերունդը, որ յարաբերաբար դասական սփիւռքի հասկացողու-

«Ա.»

Շարք՝ էջ 10

ԱՌԱՆՑ ԿԱՏԱԿԻ

ՆԱՍԱԿԱՆԻ

ԻՆՉՈՒ ՈՉ ՆԱԵԻ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Յարգելի խմբագրութիւն «Ազգակ» օրաթերթի, Չորեքշաբթի, 13 Նոյեմբերի ձեռնարկին առաջին էջով տրուած ակնարկը, որ կը կրէ «Ոչ քարոզչական նպատակներով» վերնագիրը, երկար ատենէ ի վեր մտածել կու տայ զիս, իբրև ուսուցիչ: Յարմարագոյն ձեռք գտայ նամակներով մը ձեռք իսկ թերթով այլոց սեփականութիւնը դարձնել հետեւեալ գաղափար, որ կը կարծեմ, թէ շատեր պիտի բաժնեն, նոյնիսկ երևանոց գործարարները և իրենց հետ միջական քայլերու հետևակարը չենք տեսներ (յուսամ կը սխալիմ եւ յոռետեսութիւնս սխալ դուրս կու գայ):

Երբ կը կարդամ ձեր ակնարկէն, որ Ազգայնականի մէջ ուսուցիչներուն կը պարտադրուի իրենց աշխատավարձին քառորդը փոխանցել բանկին հիմնադրամին, անկեղծօրէն ըսեմ, որ ուղղակի կը նախանձիմ:

Ճիշդ է, ձեր ակնարկին մէջ կը ճշէք, թէ այդ քայլին տուն տուն պատճառները շատ անելի քարոզչական բնույթ ունին, կը ծառայեն ներքին իրենց կորովին գարկ տալու, այսուհանդերձ երեւոյթը չի դադարի այսպէս ըսած «ուսուցիչ» ըլլալէ:

Այո, ուսուցիչի մեզի, հայերու եւ յատկապէս սփիւռքահայերու համար: Իսկ առաւելաբար՝ իրաւաբաններու համար:

Կը մտածեմ, որ ինչ ու մենք նման քայլի պիտի չզիմենք Հայ Դատի պայքարի ծիրէն ներս: Բայց բոլորովին տարբեր ընթացքով: Այսինքն՝ առանց պարտադրելու, ինչպէս կ'ընէ ազգային, իբրև ուսուցիչ մեր եկամուտին մէկ քառորդը տրամադրենք մեր դասին, ի խնդիր մեր համագալստի մարտակներու իրագործման: Բայց ատիկա կ'ենթադրէ, որ հայ ուսուցիչը, իրաւաբանը ուսուցիչը յատկապէս հազարաւոր արժանանալի մեր համապատասխան մարմիններուն կողմէ, որպէսզի ոչ միայն բարոյապէս (ինչպէս ըրած է միշտ ու կ'ընէ մինչեւ այսօր անսակարկօրէն), այլև նիւթապէս իր օժանդակութիւնը բերէ մեր դասին: Երբ ազգային կ'ընէ ատիկա, մենք պարտաւոր ենք կրկնապատիկ ընելու: Թող չզլացուի ուսուցիչի մեր իրաւունքը, որուն զիմաց չզլանանք մեր պարտաւորութիւնը: Ան որ ականջ ունի քող լսէ: Այսքան միայն:

ԼՐԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ ԻՐ

Այսինքն մեր իստակցական լեզուով լրջօրէն գրուեցին մեր երգիծական թատրոնի գիմագրուած տաղանային մասին: **Ջրուցակիցս՝** երիտասարդ, բայց արդէն յայտնի դերասան Հրանդ Թոխազեանն էր, որ ամբողջ երեք ժամ, միայն կարճատեւ դադարով մը լեցուն դաշխիճին առջեւ, տաղանդաւոր այլ դերասաններու խումբի մը հետ ներկայացուց «Միա Քուլփա» (Իմ Մեղքս) խորագրուած թատրոն-կատակերգութիւնը:

Ընկերային ու քաղաքական մեր վիճակը լուսարձակի տակ առնող, սուր հեղանջի ճամբով մեր պատմական անցեալն ու ներկան վերլուծելու յաւակնութիւն ունէր այս ներկայացումը, եւ պէտք է խոստովանիլ, որ բաւական յանդուրձան կերպով կըրճատէր բեմականացնել երբեմն ընդհանրական, ազգային, երբեմն մասնատուական, որոշ խաւի մը՝ յատկապէս իշխանաւոր դասուն վերաբերող ախտանիշներ:

Այս գրոյցը, սակայն, տեղի կ'ունենար այնպիսի պահու մը, երբ «Միա Քուլփա»-ի հետ գրեթէ միաժամանակ երեւանի հանդիսատեսին կը ներկայանար երգիծական-երաժշտական ուրիշ թատերախումբ մը՝ «Լինսի 70 ծրագիր»-ը, որ նոյնպէս ընկերային ու քաղաքական խիստ այժմէական հարցերու կ'անդրադառնար՝ նոյնքան սուր ոճով:

Մեր գրոյցը երգիծական թատերախումբներու պակասի մասին էր: Չոր մանալի իրողութիւն է, որ ամէն քայլափոխի կարելի է հանդիպիլ հայ մարդոց, որոնք քեզ կրնան մեր առօրեային փրցուած այնքան սրաւ միտ, այնքան հաճելի, խնդալիք կատակներ պատմել, սակայն այսօր փոխարէն է գտնել բեմի համար պատրաստուած,

կերպարներու շեշտադրուած նկարագրային գիծերով, լայն ընդհանրացումներով լաւ երգիծական թատերախումբը: Միամիտ լուեցիներու, «էջ» սպարանցիներու, սրամիտ գիւմրեցիներու կամ «խման» դաւաճիչներու մասին ժողովրդային կատակները, որոնք այնքան քաղցր են ու անմիջական, կարելի է հաւաքել, բնութիւն, գտել եւ պարբերաբար հրատարակել: Այս սիւնակով իսկ կարելի է որոշ պարբերականութեամբ ներկայացնել գանոնք: Կը վստահեցնեմ, որ հաճելի ընթացիկներ կ'ըլլան:

Վերը նշուած երկու թատերախումբներն ալ, իմ կարծիքովս, ազդուած են այդ կատակներէն: Քիչ մը շատ: «Միա Քուլփա»-ի պարագային, այդ ազդեցութեան իսկ պատճառով ներկայացումը շատ երկարած էր, կրկնութիւններով վիրահատուած ու քիչ մը յոգեցնող: Ստեղծագործական խումբը գիտակցած է այս խնդիրին, կարծեմ, որովհետեւ ներկայացումը արդէն իսկ որոշ խմբագրումներու եւ կրճատումներու ենթարկուած է: Տակաւին գործ կայ ընելիք, յղկելիք: Հրանդի ու իր ընկերները պատրաստ են այդ աշխատանքը կատարելու ու ես վստահ եմ, որ կը յաջողին, մանաւանդ որ անոնք կը ծրագրեն ներկայացումը տանիլ Սփիւռք, որուն համար անհրաժեշտ կը դառնայ առնուազան մէկ ժամ կրճատել գայն:

«Լինսի»-ի պարագան ուրիշ է: Արաւ Երնջակեանի միւս ընդ թատերականութիւնը կառուցող կրկնող այս ներկայացումը քիչ մը շատ տեղայնացուած է, եւ այս օրերուն երեւանի ապրանքային կրկնուած մարդոց միայն հասկնալի կրնայ ըլլալ անոր յղումները: Բայց եւ «Լինսի»-ին յաւանգտյալ կը ծագրէ շինարարական այն թափփած

աշխատանքը, որուն պատճառով, անիմաստ տեղը, ամիսներէ ի վեր փոշիի ու կեղտի մէջ թաղուած են երեւանի կեդրոնական թաղամասերը: Քիչ մը կարգ-մակերպուածութիւն, քիչ մը սրտցաւութիւն, շատ անելի տանելի պիտի ըլլար այս ամէնը: Այս էր երեւի ներկայացման պատգամը:


Չոյզ ներկայացումները ունին նաեւ իրենց ճառային բաժինը, որոնց միջոցով բարոյախօսական ու ազգասիրական յորդորներ կը փոխանցուին հանդիսատեսին: Իմ կարծիքով, այդ բաժինները աւելի կը ծանրացնեն ու կը վնասեն թատերախումբներուն:

Ահա երկու ներկայացում, որոնք իրենց թերութիւններով հանդերձ, ստեղծագործական յաւաքատանքներ են, կենսականութեան ապացոյցներ, որոնք կրնան ի վերջոյ տանիլ անելի լուրջ գործերու ստեղծման: Հայկական իրականութիւնը թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Սփիւռքի մէջ կարիք ունի Մեծ Պարոնեանի աւանդութիւնը շարունակողներու, մանաւանդ այս օրերուն, երբ մեր ազգին ու պետութեան ճակատագիրը ստորին ողնները պէտք է լուսարձակի տակ մնան, պէտք է սուր աչքէ ու սուր լեզուէ քաշուին ու ինչու չէ՞ սանձուին:

Այս երկու ներկայացումներուն նիւթերը պատրաստողները՝ Վահրամ Սահակեանի ու Արա Երնջակեանի կողմէն, Սփիւռքի մէջ ինձ ծանօթ են Վահէ Պէրպէրեանի, իսկ Հայաստանի մէջ Վարդան Պետրոսեանի կատակախօսական մենակատարութիւնները, որոնք իմ կարծիքովս, բաւարարուեցան եւ ուժակաւութիւն ունին իրենց մէջ լուսատեսութիւն հերոսներու չելու այդ սեռի ներանրկան իրականութեամբ: Ուրեմն՝ այնքան ալ ողբերգական չէ մեր վիճակը: Առանց կատակի:

ԱՐԾԱՐԾՈՒԹՅԱՆ

Bon Marché



Rideaux (Accessoires, Couture et Installations)
Couvertures - Draps de Lit - Serviettes - Eponges - Nappes de table
et un Grand choix de Linge de maison
Uniformes pour medecins et infirmieres
Robes de bonnes

Place de la Municipalité de Hourj Hammoud Rue de la Municipalité N°31 - Tel: (01) 257266

www.lemagan.com

PHOTO NERSES



ԱՐԱԳ ՍԳՍԱՐԿՈՒԹՅՈՒՆ - ՈՐԱԿԱՌ ԼՈՒՍԱԿԱՐԵՐ

Չոր ուրախ առիթներու լուսանկարները տպեցէ ճոր հասած ԱՐԿԻՎԱԿԱԿ ԴԻԳԻՏԱԿ ԵՄԵՐՈՅԻ ԲՈՅՈՅՈՒՄ ԹՐԱԿԱՌԻ ԲԱՆԳԱՆԳ ԼՂՄԻՆՈՒՄ

Ստանձնում՝ 20 վայրկյանէն:

Լուսանկարներ կ'անձագրենք CD-ի եւ կամ FLOPPY տիպիներու վրայ:

Cameraներու ճիւղ հաւաքածոյ
պատճեններ եւ ցուցիչ շրջանակներու ընտիր տեսակով:

Կը ստանձնենք ուրախ առիթներու photo նկարահանումը, արդիական մեքենաներով եւ յարմարագոյն գիններով:

Պուրջ Համուտ, Եղաբապտիստարանի փողոց,
«Սանթրո Արիճ»-ի դիմաց, ԿԵՆ 01-261858 եւ 01-255992

ԳՐՈՂՆԵՐՈՒ ԵՒ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

Շարաթ, 26 Հոկտեմբերին, Ուուստայտի Հայ կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Նիւ Եորքի շրջանի շարք մը հայ գրողներու եւ մտաւորականներու հաւաք-կլոր սեղանի մը: Այս կլոր սեղանին ներկայ էր «Բագին» ամսագիրի խմբագիր Պողոս Սնայպեան:

Հաւաքին ընթացքին տեղի ունեցաւ միտքերու փոխանակում սփիւռքահայ գրականութեան հետադաշ գարգացման, հայեցի դաստիարակութեան, հայերէնի ուղղագրութեան, հայկական դպրոցներու պահպանման, հայերէնի դասուանողութեան կարեւորութեան եւ շարք մը գրական-մշակութային հարցերու շուրջ:

Փողովը կը ղեկավարէր Կարօ Արմէնեան, որ վերջապէս արտայայտուած միտքերն ու տեսակէտները: Կարօ Արմէնեան հետեւեալ ձեւով եզրափակեց եղած միտքերու փոխանակումը: «Ամէն ինչէ առաջ, հարգաւորականութեան խնդիրը պահպանելու խնդիր է եւ մտաւորականութեան միջոցով հարգաւորականութեան ստեղծելը նոյնպէս կարեւոր խնդիր մըն է: Մտա-

ծողութեան ուրիշ խնդիր մը կապ ունէր ընթացիկ գրականութեան միջնորդութիւնը: Սփիւռքի մէջ զգալի նահանջ արձանագրուած է ընթացիկ տարիներու ընթացքին եւ այս հարցը վերանայման կը կարօտի: Վերջապէս խօսուեցաւ ընդհանուր մշակութային հարցին մասին: Մերնդափոխութեան հարցը եւ մշակութային հարցը շատ սերտ կերպով կապուած են մեր կեանքին մէջ: Եթէ մենք մշակութային փոխանցելու խնդիրը ճիշդ չընտրենք, մենք պիտի տեսնենք հայրենիքի հետզհետէ իրարու չնմանող յաջորդական սերունդներ, որոնց միջոցով միութեան կապը այնքան պիտի թուլանայ, որ մեր կապը խզած պիտի ըլլանք մշակութային իրական ակունքներուն հետ: Հետեւաբար, գրականութեան մասին մեր բոլորին մտածածը այն է, որ գրականութիւնը այստեղ դերակատարութիւն մը ունի: Վերջապէս, կատարուեցան

կարճակերպական մարզին կապուած կարգ մը արտայայտութիւններ: «Բագին»-ի մասին խօսելու ընթացքին արտայայտութիւններ եղան այն իմաստով, որ «Բագին»-ը մեր ներկայ խնդիրներուն եւս պէտք է ծառայէ, նոր բեմեր պէտք է ստեղծէ, առանց գիշերելու իր ներկայ չափանիշները:

Արձարձուեցաւ նաեւ «Բագին»-ի ֆինանսաւորման կարեւոր հարցը: Մեծուստայտի ուղղագրութեան վերադարձը անխուսափելի նկատուեցաւ: Կլոր սեղանին մասնակիցները կարծիք յայտնեցին, որ Մեծուստայտեան ուղղագրութիւնը պէտք է վերահաստատուի աստիճանական կերպով եւ ոչ՝ շտապողական մտեցումներով:

Հաւաքի վերջապէս արտայայտութեան Պ. Սնայպեան շնորհակալութիւն յայտնեց Համագործակցութեան կողմէ: Մերնդափոխութեան վերադարձը անխուսափելի նկատուեցաւ: Կլոր սեղանին մասնակիցները կարծիք յայտնեցին, որ Մեծուստայտեան ուղղագրութիւնը պէտք է վերահաստատուի աստիճանական կերպով եւ ոչ՝ շտապողական մտեցումներով:

ԲԱՄԱՍԱՍԱՆՔ, ԹԷ ԲԱՆՆ ԱՍԱՆԿ

Յրահանախօս Երկիրներու վեհաժողովին Պէյրութի մէջ կայացուեց ետք երիտասարդ հայ մայրեր իրենց մանուկ զաւակները, որոնք լեզուի նոր պիտի լսեն, յանձնաճեմ են օտար մանկամտերներու, որպէսզի անոնց լեզուն ֆրանսերէնով «կտրուի»: Ականջը խօսի Սիլվա Կապուտիկեան: Մեր երիտասարդ մայրերը մոռցած ըլլալ կը բուրն այնքան քաղցր հնչող բանաստեղծութեանը տողերը:

«Տէս թոթովեց բառ մի անգին, Հայկեան լեզուից մեր սրբազան, Ասես մասունք հաղորդութեան Դիպաւ մանկանս շուրթերին»:

Այս ընթացքով ի նչպէս պիտի շարունակենք հայակերտումը...

ՉԵՅԹՈՒՆԻ ՀԵՐՈՍԵՐՈՒ ՅԻՇԱՍԱԿԻՆ ՀՈԳԵՎԱՆԳԻՍԵ ԻՒԷԶԲԱՐԻ ՉԵՏԵՂՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՉ

Կիրակի, 24 Նոյեմբեր 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայրավանքին մէջ, տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն՝ Զէյթունի քաջամարտիկներուն հոգիներուն համար:

Հոգեհանգստեան արարողութեանն էր Կիրակոյ կաթողիկոսութեան միաբաններու եւ դպրեւանքի սաներու ընկերակցութեամբ, հաւատացեալներու բազմութիւն մը մասնակցեցաւ կաթողիկոսարանի շրջափակին մէջ գետեղուած Զէյթունի Հայրենակցական Միութեան կողմէ Կիրակոյ կաթողիկոսութեան նուիրուած խաչքարը բացումին: Ներկաներուն շարքին էին նաեւ Պուրջ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարտիան եւ մեծ թիւով երէց զէյթունցիներ: Դպրեւանքի սաները հնչեցուցին «Արեւ ելաւ գէյրուցիցներ»:

Արձուերոյն Զէյթունի քաջամարտիկներուն ձօնուած խաչքարի բացման առիթով, յանուն Զէյթունի Հայրենակցական Միութեան վարչութեան իր խօսքը փոխանցեց վարչութեան ատենապետ Պերճ Արապեան: Ան իր խօսքին մէջ ըսաւ, որ հայ ժողովուրդը իր պատմութեան ընթացքին ունեցաւ բազմաթիւ հերոսական սխրանքներ եւ նահատակներ, եւ ասիական առիթ եղած է, որ ժողովուրդը պանծալընէ իր նահատակներուն յիշատակը, անոնց համար յուշակոթողներ կառուցելով: Ժամանակը հասած էր, ըսաւ Պ. Արապեան, որ Զէյթունի քաջամարտիկներու յիշատակին ալ յուշակոթող մը կանգնեցուի աշխատանք մը, որ Զէյթունի Հայրենակցական Միութեան երկար տարիներու գլխաւոր նպատակն էր:

Պ. Արապեան յայտնեց նաեւ, որ իր ամբողջ պատմութեան ընթացքին, Զէյթունի ժողովուրդը միշտ հաւատարիմ եղած է իր եկեղեցիին եւ քրիստոնէական սկզբունքներուն, եւ ասոր համար ալ գարմանալի չէ, որ Զէյթունի քաջամարտիկներու յիշատակին նուիրուած խաչքարը գետեղուի Կիրակոյ կաթողիկոսարանի վեհարանի շրջափակին մէջ:

Զէյթունի Հայրենակցական Միութեան վարչութեան խօսքին ետք, յանուն Արամ Ա. կաթողիկոսի խօսք առաւ Տիրաք Եպս. Փանոսեան, որ գնահատեց Զէյթունի Հայրենակցական Միութեան այս նախաձեռնութիւնը:

Դպրեւանքի սաները կատարեցին «Երբ որ բացուիմ դո՛ւներն յուսոյ» երգը, մինչ կը կատարուէր խաչքարի բացումը: Բացման արարողութեանն էր Զէյթունի Հայրենակցական Միութեան անդամներն ու խաչքարի բացման արարողութեան ներկաները վեհարանին մէջ ընդունուեցան Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոսին կողմէ:

Վեհափառին իրենց երախտագիտական խօսքերը արտասանեցին Պէյրութի Զէյթունի Հայրենակցական Միութեան ատենապետ Պերճ Արապեան եւ այս առիթով Պէյրութ ժամանած Հայկալի Զէյթունի Հայրենակցական Միութեան ատենապետ Յարութ Ալապոզեան:

Արամ Ա. կաթողիկոս ներկաներուն փոխանցեց իր օրհնութեան խօսքը: Ան ըսաւ, որ նախապէս վեհարանին մուտքին, աղին, գետեղուած էր Հայաստանը խորհրդանշող խաչքար մը, իսկ հիմա այդ խաչքարին կու գայ միանալու Զէյթունի քաջամարտիկներուն եւ նահատակներուն նուիրուած խաչքարը, որ խորհրդանշան է հայ ժողովուրդին մղած դարաւոր պայքարին եւ արիւնքին: Ան յայտնեց, որ իւրաքանչիւր հայու մէջ զէյթունցի մը կայ, որ կը մղէ զինքը պայքարի, իր ժողովուրդի անժամանցելի իրաւունքներուն ձեռք բերման համար:

Արամ Ա. կաթողիկոսի օրհնութեան խօսքին ետք տեղի ունեցաւ աղահամերգը:

Հ.Բ.Մ. - Հ.Ե.Ը.

«ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ» ԿԵԴՐՈՆ ՄՏԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՆՈՒՄ

ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ ՄՍԻԹԱՐ ԸՆԴՅՐ

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳԻՐԸ (1120 - 1200)

Կը ծանօթացնէ՝ **ԲԺՇԿ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ**

Տեղի կ'ունենայ այսօր՝ Չորեքշաբթի, 27 Նոյեմբեր 2002, երեկոյեան ժամը 7:30ին: «Ալեք Մանուկեան» կեդրոնի հանդիսարանին մէջ, Ուսուցիչ:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՐՑԱԶԻՐՈՅՑ՝ «ՉԱՒԱԽՔ» ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԱԽԱԳԱՀ Տ. ԹՈՐՈՍԵԱՆԻ ՀԵՏ

ՀԱՐՑՈՒՄ.- Վերջերս մամուլին մեջ շատ կը խօսուի Ջալալի ինքնավարության մասին: Այս հարցը կ'արծարծենք նաև Վրաստանի եւ Հայաստանի կարգ մը պետական անձնավորություններ: Ի՞նչ է ձեր կարծիքը այս հարցին առնչուած:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Միանշանակ խնդիրը գոյութիւն ունի, հակառակ որ պետական անձնավորություններ կը պնդեն, թէ ընկերային խնդիրն է գաղութային խնդիրներ չկան, բայց իւրաքանչիւր քաղաքացի կրնայ բացատրել, թէ ի՞նչ խնդիրներ կան: Ինքնավարութեան գաղափարը նոյնինքն ժողովուրդն էր ըսել: Օրինակ՝ Աճառիան շատ փոքր է մեր շրջանին, բայց ինքնավարութիւն ունի, ինչո՞ւ Ջալալիքը պէտք է ունենայ: 1917 թուականին սկսեալ Ջալալիքի բնակչութիւնը ձգտած է ունենալ ինքնավարութիւն, սակայն կարգ մը պետական անձնավորություններ միշտ դէմ կանգնած են այդ գաղափարի իրագործման: Մեր կարծիքով, Ջալալիքը պէտք է ինքնավարութիւն ըլլայ Վրաստանի կազմին մէջ:

Հ.- Իսկ ի՞նչպէս կը պատկերացնէք խնդիրի ամենեւնի իրական լուծումը:

Պ.- Խնդիրը լուծուած Վրաստանի ինքնավարութիւններուն հիմնական գործընթացն է: Այս հարցին լուծումը մենք կը տեսնենք խաղաղ բանակցութիւններու ճամբով: Եւ որովհետեւ քաղաքական գարգացման ընթացքը ցոյց կու տայ, որ Վրաստանը պիտի դառնայ դաշնակցային պետութիւն, ճիշդ լուծումը պիտի ըլլայ մեր պետութեան մէջ ստեղծել Ջալալիքի ինքնավարութիւնը, որ միակ արդարացի լուծումը պիտի ըլլայ, ինչպէս Վրաստանի կայունացման, նոյնպէս ալ ընկերային-տնտեսական վիճակի բարելաւման: Կուտակուած խնդիրներուն համար անհրաժեշտ է ստեղծել համապատասխան օղակներ: Այս հարցին մէջ ո՞չ մէկ անջատողականութիւն, ո՞չ մէկ ծայրայեղականութիւն, ո՞չ մէկ թշնամութիւն վրացի ժողովուրդին նկատմամբ կը տեսնեմ, այլ ընդհանրական Վրաստան ինքնավարութիւն տալով Ջալալիքի ժողովուրդին՝ ցոյց պիտի տայ իր զրական վերաբերմունքը քաղաքացիներուն նկատմամբ, ինչպէս նաեւ կարելիութիւն պիտի տայ Ջալալիքի բնակչութեան գարգանալու եւ հասնալու վաղուան օրուն:

«Ա - ԻնՖՕ» Լրատու գործակալութիւն (Արեւմտահայերէնի վերածում)

ՓԵՏՐՈՒԱՐԷՆ ԵՏՔՆ ԱԼ ՆԱԽԱԳԱՀԸ ՌՈՊԷՐԹ ՔՈՉԱՐԵԱՆԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ Կ'ԸՍԷ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ

Վերջերս Վիեննայի մէջ պատասխանելով «Ազատութիւն» կայանի Հայաստանի յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն վերաբերող մէկ հարցումին, Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան ըսաւ. «Ես վստահ եմ, որ նախագահը պիտի չփոխուի, նախագահի փոփոխութեան պատճառ չկայ, իսկ նախագահ ընտրուելէ ետք ան է, որ կ'որոշէ, թէ ինչպիսի նախարարներու հետ կ'ուզէ աշխատել»:



Վ. Օսկանեան այնուհետեւ որոշ պարզաբանումներ կատարեց Քոչարեան-Ալիեւ հանդիպման վերաբերելով: Վ. Օսկանեան մասնավորաբար ըսաւ, թէ երկու նախագահներուն Փարիզի հանդիպումէն ետք Ղարաբաղի տագնապի լուծման գործընթացը բոլորովին նոր ուղղութիւն ստացած է, եւ հակառակ այն բանին, որ Արարիկյանն որոշ հարցեր մերժեց, Վ. Օսկանեանի համարակալն նոր հանգրուան մը կայ, որ զրական միատուժ կը հարցորդէ՝ ինչնորոշման իրաւունքի աւելի ամրագրումին իմաստով, ըսաւ Վարդան Օսկանեան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Հայաստանի գիւղատնտեսական տարին կը մտնենայ իր աւարտին: Այս տարի հաւելիքան 192 հազար հեկտար տարածութեան ստացւած է 420 հազար թոն հացահատիկի համախառն թիւր, որ չորսը (60 հազար թոն աւելի է անցեալ տարուան ցուցանիշէն):

Հակառակ անոր որ ընթացիկ տարուան անբարենպաստ եղանակներուն պատճառով բանջարեկէնի ցանքը յետաձգուեցաւ, սակայն հետապայ մշակուած կատարուեցաւ արդիւնաւէտ կերպով: Ինչ կը վերաբերի միջերկրամերձ, ապա այս ուղղութեամբ ալ հարցեր չեն եղած, որովհետեւ վերամշակող ձեռնարկութիւնները գնած են առաջարկուած ամբողջ բանջարեկէնը:

Գիւղատնտեսութեան Զարգացման Միջազգային Հիմնադրամին աջակցութեամբ Նոյեմբերեանի 157 հեկտար զեղծի պարտէզներուն վրայ վերջերս աւելցած է 50 հեկտար եւս: Երջանին կիրմի միջերկրամերձ, զեղծի աճին համար, եւ բնակիչները կը յուսան, որ վերականգնի Նոյեմբերեանի զեղծի բերեմնի համարը:

Այս տարի եղանակային պայմանները նպաստաւոր են գիւղատնտեսական աշխատանքներու իրագործման համար: Հայաստանի գիւղատնտեսութեան նախարարութեան տուեալներուն համաձայն, մինչեւ հիմա կատարուած է 93,8 հազար հեկտար աշնանացան: Կը նախատեսուի, որ այս թիւը շուտով անցնի 100 հազար հեկտարի սահմանը:

Հայաստանի գիւղատնտեսութեան նախարարութեան 18 Նոյեմբերի տուեալներով, այս տարի Հայաստանի այգիներէն հաւաքուած է 96,005 թոն խաղողի բերք, որ 4262 թոնով պակաս է անցեալ տարուան նոյն ժամանակամիջոցի արդիւնքէն: Ասոր պատճառը, ըստ բուսաբուծութեան գարգացման եւ բոյսերու պաշտպանութեան վարչութեան, մասնագէտներուն, զարնանային խոնաւ եղանակն էր, որ ազդելով բերքի որակին վրայ՝ պատճառ դարձաւ նաեւ սնկային հիւանդութիւններու տարածման:

Սակայն հակառակ այս իրողութեան, 23 Սեպտեմբերէն մինչեւ հիմա Հայաստանի գինիի գործարաններուն կողմէ միջերկրամերձ է 47,026 թոն խաղող, որ մօտ 10 հազար թոն աւելի է անցեալ տարուան նոյն ժամանակամիջոցի ցուցանիշէն: Դարձեալ, նախարարութեան 18 Նոյեմբերի տուեալներով, այս տարի հաւաքուած է 413,400 թոն բանջարեկէնի բերք՝ անցեալ տարուան 23,100 թոն աւելի:

ԱՅԺԻԼ ԻՐԱՐՕԳՆՈՒԹԵԱՆ ՍՆՏՈՒԿԸ, ԿԱՆԽԱՐԳԻԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՈՒՐԾՔԻ ՔԱՂՅԿԵՂԸ, ST. MARC ԱԽՏԱՃԱՆԱԶՄԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՆԵՏ ԳՈՐԾԱԿՅԱԲԱՐ ՆՈՅՏԵՔԻ ԼՍՈՒՄԱՆ ԸՆԹԱՅԻՆ Կ'ԸՍԷՆ ԶԱՏՈՒԿ ԱՌԹ՝ MAMMOGRAPHIE + ECHO 50000 Լ.Ո. ՓՈՒՄԱՆ 150000 Լ.Ո. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ Կ'ՈՒՆԵԱՆ ԱՅԺԻԼ ԳՐԱՍԵՆՃԿԻՆ ՍԵՋ, ԱՍԵՆ ՕՐ ԱՆՈՒՑԵԱՆ ԺԱՄԸ 8:30Է 4:30:

ԱՅՍ ԱՌԹՈՎ ԻՐԱՔԱՆՉՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԸՐԻՕՐԸՆ ՊԻՏԻ ՕԺՏՈՒԹՅԱՆ MEDNET INFO-SANTE ԲԺՇԿԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀԱՅԱՆ ՇԵՆԱՋԱՅՆԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԵԿ ՏԱՐՈՒՄԱՆ ՔԱՐՏՈՎ: ԱՅԺԻԼ ԱՅԺՏԻ ՕԷՆՔ. Բ. ՅԱՐԿ ՀԵՌ. 242556/7

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ «Ազգակ» մէջ ազգային կամ առևտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեան պարագային՝ ցայտարար պաշտօնակալ թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգակ» ծանուցումներու գրասենեակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ...

Հայաստանի Համայնավար Կուսակցութեան համագումարի յատուկ նիստը բեւե վաղաժամ Պարբերականը միաձայնութեամբ առաջարկեց իրրեւ նախագահական թեկնածու, սակայն բոլորին համար ակնյայտ է, որ Հայաստանի Համայնավար Կուսակցութեան (ՀԿԿ) ղեկավարը երբեք պիտի չղառնայ «16»ի միասնական թեկնածուն: Մինչդեռ «16»ի շրջագիծին մէջ առաջնութեան ձգտողները իսկական սիրախաղի մը նախաձեռնեցին համայնավար քուէարկող սիրաշահելու համար:

Ազգային Միաբանութիւն Կուսակցութեան ղեկավար Արտաշէս Գեղամեանի խօսքը հակիրճ էր, բայց դիպուկ. «Ակամայ կը մտածէի, թէ հայրս ինչ խորհուրդ պիտի տար. ողջոյնի խօսքը ինչպէս սկսեի եւ ինչպէս աւարտէի: Ան մէկ բան պիտի ըսէր ինձի. միաբանեցէք համայնավարներուն հետ եւ փրկեցէք երկիրը»: Հետեւեցաւ բուն ծափահարութիւններու տարափ մը, իսկ շարքերէն լսուեցան բացազանց լուրջներ. «Ասիկա ընդունելի առաջարկ է», «մենք պատրաստ ենք»:

Հայաստանի ժողովրդական Կուսակցութեան առաջնորդ Ստեփան Գեղամեանի խօսքը ակնյայտօրէն կը զիջէր «16»ի անդամ կուսակցութիւններու համագումարներուն մէջ առաջին անգամ ելոյթ ունեցած Գեղամեանի գլուխ-գործոցին, սակայն տողորուած էր Համայնավար Կուսակցութեան գովքով. «Հայաստանի Համայնավար Կուսակցութիւնը անցած է փառաւոր ուղի մը, միշտ եղած է ու կը մնայ ժողովուրդին շահերը պաշտպանող, ընկերային արդարութեան հետամուտ քաղաքական ուժ մը: Այսօր աւելի կուտ է եւ ամրապինդ: ՀԿԿ-ՀԿԿ համագործակցութիւնը այսօր աւելի կարեւոր է, որովհետեւ ժողովուրդին պահանջը կայ»:

Այսպիսով, «16»ի շարքերէն արդէն իսկ առաջնորուած 5 նախագահներուն մէջ անկասկած նախընտրելիներն են Գեղամեանն ու Գեղամեանը: Աստուծոյ ներքին պայքարը Համայնավար Կուսակցութեան քուէարկողներուն համար յառաջիկային կրնայ ընդունիլ ամենեւնի արտառոց ձեւերը: Առաջինը Պարբերականին հասնելի է իր համաձայնութեամբ անցնելով «գանձուածները գրանցել» նոտարական տաղանդով, ինչ որ այսօր շատ կը պակասի Համայնավար Կուսակցութեան: Երկրորդը բեւե չունի առաջնորդի որակ, սակայն Պարբերականը զաշնակից դարձնելու պարագային, կարելիութիւն պիտի տայ համայնավար նախկին վերնախաւին փայլելու ամբողջ «շքեղութեամբ»: Իսկ Համայնավար Կուսակցութեան, Սերգէյ Բաղալեանի մահէն ետք, իսկական առաջնորդ պէտք է, այլապէս կուսակցութեան ջանքի մը տարի ետք միայն յիշատակ պիտի մնայ:

ԳԵՌՈՎ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ «Հայոց Աշխարհ» (Արեւմտահայերէնի վերածում)

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է Հ. Յ. Գ. ԼԵՄԻ 2003Ի ՊԱՏԻ ՕՐԱՅՈՅՑԸ ԱՅՍ ԱՌԹՈՎ ԻՐԱՔԱՆՉՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԸՐԻՕՐԸՆ ՊԻՏԻ ՕԺՏՈՒԹՅԱՆ MEDNET INFO-SANTE ԲԺՇԿԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀԱՅԱՆ ՇԵՆԱՋԱՅՆԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԵԿ ՏԱՐՈՒՄԱՆ ՔԱՐՏՈՎ: 1973 2003 ՍԱԿ 10,000 ԼԻԲ. ՈՍԿԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՄԱՀԱՊԱՏԻԺԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ Է 42 ՀՈԳԻ

15 Նոյեմբերին տեղի ունեցած մամուլի ասուլիսի մը ընթացքին Հայաստանի արդարադատութեան նախարարութեան կառուցուածքային բարեփոխումներու վարչութեան պետ Նիքոլայ Առուստամեան յայտնեց, որ ներկայիս Հայաստանի մէջ մահապատիժի գատապարտուած է 42 հոգի, որոնք ժամանակաւորապէս կը պահուին Նուպարաշէնի բանտին մէջ:

Ն. Առուստամեան նշեց, որ 1991էն սկսեալ Հայաստանի մէջ մահապատիժ չի գործադրուել, եւ նոր քրէական օրէնսգիրքի վաւերացումէն ետք միայն պիտի լուծուի դատապարտեալներուն պատիժը ցկեանս բանտարկութեամբ փոխարինելու, ինչպէս նաեւ նոր բանտի մը ստեղծման խնդիրները:

Համեմատելով Հայաստանի բանտերը ԱՊՀի երկիրներու բանտերուն մէջ, Ն. Առուստամեան նկատել տուաւ, որ Հայաստանի մէջ վիճակը համեմատաբար աւելի լաւ է:

ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ


- ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ՀԱՐԺՈՒԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ԵՐԵՎԱՆԻ Հրազդանի կիրճին մէջ կատարուած են բարեկարգութեան աշխատանքներ եւ տնկուած է 400 ծառ: «Հրազդան կիրճ» ընկերութեան տնօրէն Տիգրան Խաչատրեանի համաձայն, վերոնշեալ ծրագիրին աջակցած է «Յանուն Մարտիկային Կայուն Զարգացման» ընկերութիւնը՝ տրամադրելով 200 տունկ: Յաւելուելու 150 ծառի տունկ եւս պիտի տրամադրէ «Կանաչապատում» ընկերութիւնը: ՅԱՌԱՌԱՋԻԿԱՅ ԽՈՐՈՒԱՆ ԶՈՆԻՍԻՆ ԿԻՏԻ ԱՐԱՐԻ 22,4 բիլոմետր երկարութիւն ունեցող Արոտան - Արփա փապուղիին կառուցումը, ինչ որ առիթ պիտի ընձեռէ Արոտան գետի ջուրերու (տարեկան 165 միլիոն խորանարդ մետր) Արոտան - Արփա փապուղիին միջոցով տեղափոխելու Սեւանայ լիճ: Այս փապուղիին շինարարութեան համար 2003ի պետական պիտուէտով նախատեսուած է յատկացնել 2,3 միլիարդ դրամ, որ բաւարար է շինարարութեան աշխատանքները աւարտելու համար:

ԿՈՒՉՈՒԻՆ ԿՈՒՉՈՒԻՆ •Ոսկերչական գործատեղի մը կարիք ունի •Փորձառու ոսկերչի (ստուէր) մը. •Թափուլ մը հանող օրիորդի մը. •Ոստիւմի վրայ աշխատող օրիորդի մը: Դիմել Սետ ԷԼ Պառուշիէ: Հեռ. 01-889993:

Միջազգային Քաղաքական Կեանք

ԻՍՐԱՅԷԼ

ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐՈՒՆ ՂԵԿԱՎԱՐԸ



Արդեօք Հայֆայի քաղաքացիներին՝ Ամրամ Միցնայի ընտրությունները Աշխատաւորական կուսակցութեան իրրեւ ղեկավար, որեւէ բան պիտի փոխէ՞ Միջին Արեւելքի տագնապին մէջ: Պատասխանը շատ հաւանաբար «ոչ» է, թէեւ պաղեստինցիներուն մեծ մասը անոր մէջ կը տեսնէ «գործակից» մը, որուն հետ կարելի է բանակցութիւններու սկսիլ:

Նախընտրական շրջանին անոր կատարած քաղաքական յայտարարութիւններն ու խոստումները յոյս ներշնչեցին պաղեստինցիներուն: Միւս երկու թեկնածուները, մէկը՝ ճանչցուած իրրեւ «բազէ», իսկ միւսը՝ չափաւորական մը, խոստացան պաղեստինցիներուն տառապանքը սաստկացնել: Եթէ «չափաւորական» Հայիմ Ռամոն շահէր, Աշխատաւորական կուսակցութիւնը պիտի պաշտպանէր Արիել Շարոնի ավակողման Լիքուտ - Աշխատաւորական կուսակցութիւնը ձախող կառավարական ընկերակցութեան շատ մը որոշումները, ներառեալ՝ յատկապէս պաղեստինցիներն ու իսրայէլացիները իրարմէ բաժնող պաշտպանութեան ցանկապատին շինութիւնը: Իսկ եթէ «բազէ»՝ պաշտպանութեան նախկին նախարար Պենիամին Պրն էլիազարը շահէր, ոչ մէկ տարբերութիւն պիտի նկատուէր Լիքուտի ճնշող քաղաքականութեան եւ ավակողման Աշխատաւորական կուսակցութեան կեցուածքներուն միջեւ: Միցնայ խոստացած է լուծում մը գտնել պաղեստինցիներուն եւ 20 ամիսէ ի վեր իսրայէլի ղեկավարութիւնը ստանձնած անկողման կառավարութեան միջեւ գոյութիւն ունեցող անընդուն: Յունուորին կայանալիք ընտրութիւններուն վարչապետ ընտրուելուն պարագային, ան խոստացած է լուծել կապալի մէջ հրեաներու անկեղծում Տարցը: Միւս չակոյցութեան ենթակալուած կազմալի մէջ ընկալեցուած են եօթը հազար հրեաներ, որոնք կ'ապրին աւելի քան մէկ միլիոն պաղեստինցիներու մէջ, որոնք իրենց կարգին խիտ ընդվզած են ինքիֆայի անջնջելու նպատակով գործադրող իսրայէլեան շրջափակումին: Այդ հրեաներուն մեծ մասը իսրայէլի ավակողման կուսակցութիւններուն քուէարկողներն են: Սակայն վիճակագրութիւններ ցոյց կու տան, որ իսրայէլացիներուն մեծ մասը, ինչպէս նաեւ միջազգային ընտանիքը կը հաւատան, որ հրեաներու բնակեցումը մեծ արգելք է խաղաղութեան կայացման համար եւ պէտք է վերջ դրուի այդ երեւոյթին: Ան նաեւ խոստացած է անյապաղ պարպել կազան եւ Այսրյորդանիոյն ապագային մասին բանակցութիւններու վերսկսել Պաղեստինի ղեկավարութեան հետ:

Այս բոլորը շատ զեղեքիկ խոստումներ են, սակայն նստարին միւս կողմը կան կարգ մը չոր իրականութիւններ: մէկը այն է, որ վերջին վիճակագրութիւններուն համաձայն, Արիել Շարոն պիտի ջանալիք Աշխատաւորական կուսակցութիւնը, 28 Յունուորին: Իսկ միւսը հետեւեալ հարցադրումն է. որն է իսրայէլեան աղանջին: Պատահա՞ծ է, որ Աշխատաւորական կուսակցութեան կողմէ քաղաքական բեմ դուրս գալ անձնաւորութիւն մը, որ իսկապէս նախանձախնդիր ըլլայ պաղեստինցիներուն համար արդար լուծում մը գտնելու: Ճիշդ չէ՞ արդեօք, որ Լիքուտն ու Աշխատաւորական կուսակցութիւնը «պարկեշտ եւ վատ ոստիկան»ի կրկնակի դերը կը խաղան, որ ազդու ձեւով կը նպաստէ սիոնական ծրագիրներու յառաջխաղացքին, որուն նուիրուած են իսրայէլացի բոլոր ղեկանազէտներն ու քաղաքական ղեմերը:

Աղանջի ըլլալ, չափաւորական կամ նոյնիսկ բազէ, Աշխատաւորական կուսակցութեան ղեկավարը պիտի ողջունուի իրրեւ խաղաղութեան յոյս եւ մարտահրաւէր՝ սիոնական անընդ քաղաքականութեան: Երբ ծայրայեղականները կը շարունակեն ճգմել պաղեստինցիներուն տենչերը, աշխատաւորական քաղաքական ղեմերը, եթէ ընդդիմութեան կողմն են, կը բողոքեն եւ արտաքին աշխարհին մտածել կու տան, որ իսրայէլի մէջ իսկապէս գոյութիւն ունին չափաւորական եւ տրամաբանական կարծիք ունեցողներ: Սակայն, եթէ Աշխատաւորական կուսակցութիւնը գալ իշխանութեան գլուխ, անիկա ամենայն անտարբերութեամբ ամէն ձեւի պիտի դիմէ խաղաղութիւն հաստատելու համար:

Իսրայէլի քաղաքական բեմին վրայ կ'ա՞յս արդեօք որեւէ քաղաքական ղեկավար, որ իսկական լուծում կը փնտռէ: Մենք վերջին տասը տարիներուն ակախառես եղանք սուտ նախաձեռնութիւններու, յուսախոսութիւններու, զեղծումներու եւ պաղեստինցի արմատականներու զրդումին, որոնց արարքները իրրեւ պատրուակ կը ներկայացունեն կասեցնելու համար ղէպի խաղաղութիւն երթը: Ինչո՞ւ ակնկալենք, որ Աշխատաւորական կուսակցութեան նոր ղեկավարը տարբեր պիտի ըլլայ միւսներէն:

ԽՍՐԱՎԱՐԱԿԱՆ
«ԱՐԱՊ ՆԻՌՈՒՉ»

ՊԱՐՏՔԵՐԸ ԱՊՃԻ ԱՆԴԱՄ ԵՐԿԻՐՆԵՐԸ ԿԱՌԵԱԼ ԿԸ ԴԱՐՁՆԵՆ ՌՈՒՄԻԱՅԷՆ

Այս ամիս Հայաստան համաձայն գտնուեցաւ Ռուսիոյ յանձնելու պետական հինգ ընկերութիւններ՝ վճարելու համար 100 միլիոն տոլարի պարտքը, զոր ունէր Մոսկուայի: Նրբիւրզիտանի վարչապետը կ'ըսէ, թէ նմանօրինակ քայլի կրնայ դիմել նաեւ իր երկիրը: Սակայն այս լաւագոյն ձեւն է արդեօք պարտք վճարելու, կամ ԱՊՀի այլ երկիրներ պիտի հետեւին՝ այս օրինակին:

Համաձայնագիրը, որ ստորագրուեցաւ Երեւանի մէջ, ծրագրաւորուած է ընթացքի մէջ էր ամբողջ անցնող տարին: Երեւան համաձայն գտնուեցաւ Ռուսիոյ յանձնելու հինգ կառուցներ՝ երկտրոնային սարքերու ընկերութիւն մը, ջերմութի ընկերութիւն մը եւ գիտաշխատութեան երեք հիմնարկներ: Փոխարէնը Ռուսիա փակուած պիտի համարէ Հայաստանի ունեցած 100 միլիոն տոլարի պարտքը:

Հայաստան ԱՊՀի երկիրներէն միակը չէ, որ չըջնային չափանիշով գումարներ պարտական է Ռուսիոյ: Երբ նախկին խորհրդային Միութեան հանրապետութիւնները անկախացան, անոնց համար «նոր հաշիւ» բացուեցաւ, որովհետեւ Ռուսիա ինք իր ունեւորները վրայ առաւ այդ հանրապետութիւններուն արտաքին պարտքերը: Սակայն յաջողող տասնամեակին նորանոր պարտքեր բարդուեցան, յատկապէս փտածութեան, բարեկարգումներու չզոյուցեան, հակամարտութիւններու եւ Ռուսիայէն կազի եւ քարիւղի ներածումներու պատճառով:

Օրինակի համար, Հայաստանի, Վրաստանի, Նրբիւրզիտանի, Մոլդովիոյ եւ Տաճիկիստանի քանի մը միլիառ տոլարի հասնող արտաքին պարտքերուն 10 առ հարիւրը Ռուսիոյ է:

Հայաստանի մէջ ստորագրուած համաձայնագիրէն ետք, Նրբիւրզիտանի վարչապետ Նիբոլայ Թանայեւ յայտնեց, թէ իր երկիրը առաջարկած է նմանօրինակ համաձայնագիրի մը կնքումը:

Նման համաձայնագիրներ ունին կարգ մը ակնյայտ առաւելութիւններ:

